

2012 թվականի հուլիսի 9-ին կայացավ Նոր Արտագերս համայնքի ժողով՝ մասնակցությամբ համայնքի 53 անդամների: Ժողովին ներկա էին դպրոցի, բուժ. անբուլատորիայի և համայնքապետարանի աշխատակիցներ: Ժողովը նախագահում էր համայնքապետ Ղ. Ունուրչատյանը, քարտուղարում էր Լ. Վասիլյանը:

Ժողովը հանտատում է հետևյալ օրակարգը.

1. Համայնքի ղեկավարի 2012 թվականի առաջին կիսամյակի համայնքապետարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություն:
2. Համայնքի հիմնախնդիրները:

Լսեցին- 1. Համայնքի ղեկավարի 2012 թվականի առաջին կիսամյակի համայնքապետարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

- 1) Մինչև գարնան գյուղատնտեսական աշխատանքների սկսվելը կատարվել է առվահանի աշխատանքները,
- 2) Վերանորոգվել են դաշտ տանող մի քանի կամուրջներ:
- 3) Մարտ ամսին վերանորոգվել են խմելաջրի խողովակներ, որոնք ձմռան ցրտից խափանվել էին:
- 4) 2012 թվականի առաջին կիսամյակում գումարվել է ավագանու 2 նիստ:
- 5) Համայնքապետարանի կողմից կազմակերպվել է դպրոցի ավարտական դասարանի աշակերտների անձնագրեր ստանալ:
- 6) Վերոհիշյալ դասարանի աշակերտներից յուրաքանչյուրին տրամադրվել է 5000- ական դրամ՝ որպես օգնություն:
- 7) Հաղթանակի օրվա կապակցությամբ արցախյան պատերազմի մասնակիցների տրամադրվել է 10000-ական դրամ՝ որպես օգնություն:

Համայնքապետարանի աշխատակիցներով պարբերաբար շրջայց է կատարվել համայնքում վարձավճարների գանձման համար, սակայն հավաքագրվել է չնչին գումար՝ բերքի սակավության և բնակչության անվճարունակության պատճառով: Խոստանում ենք որ այն կկատարվի երկրորդ կիսամյակում և մեծ ցուցանիշներով:

Որոշեցին.

Հանձնարարել համայնքապետ Ղ. ունուրչատյանին վերացնել համայնքում առկա թերությունները:

1. Կարգ ու կանոն հաստատել երիտասարդների շրջապատում:
2. Պատշաճ կերպով կատարել գյուղամիջյան պուրակի և հուշարձանին հարող տարածքի մաքրման աշխատանքները:

Լսեցին. 2. Համայնքի հիմնախնդիրները.

Համայնքի հիմնախնդիրներն են.

1. Կուլտուրայի տան հիմնանորոգում
2. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում
3. Դպրոցի շենքի հիմնանորոգում
4. Գուղամիջյան ճանապարհի 400մ հատավածի հիմնանորոգում
5. Խմելաջրի ջրագծի հիմնանորոգում

Որոշեցին.

Հանձնարարել համայնքապետ Ղ. Ունուրչատյանին գրավել համայնքի կարևորագույն հիմնախնդիրներից 3-ի, այն է՝ կուլտուրայի տան, մանկապարտեզի և դպրոցի շենքերի հիմնանորոգման աշխատանքների իրականացմամբ:

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝

Ղ. ՈՒՄՈՒՐՇԱՏՅԱՆ

